ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԵԿԵՂԵՑԻ

Յունիսին Եկատերինոսլաւում հոգևորականների համագումարը քննութեան է առել ծխի բարենորոգութեան խնդիրը. ցանկութիւն է յայտնել՝ ծխականներին իրաւունք տալ քահանայութեան թեկնածուներ առաջարկել և եկեղեցապատկան գոյքը կառավարել։ Կարևոր է համարուել հոգևորականութեան նիւթական և իրաւական դրութիւնը բարւոքելու խնդիրը քննութեան առնելնաև, որ հոգևորականութեանը իրաւունք տրուի երկրի քաղաքական կեանքում մասնակցել։

Տօբոլսկում ս. Իոանն Տօբոլսկացու նշխարների սրբադրումն է տեղի ունեցել մեծ հանդիսով։ Այս առթիւ հաւաքուած եպիսկոպոսների խորհուրդը հարց է բարձրացրել Իրկուտսկում միտրոպոլտութիւն հաստատել. քննուել է նաև ծխի բարենորոգութեան խնդիրը։ Սիբիրի հոգևորականութեան մեծ մասը այժմ եկեղեցական բարենորոգումների յարմար ժամանակը չէ համարել։

Ներքին Գործոց նախարարութիւնը հարց է բարձրացրել՝ հրանարակելու օրէնքով ճանաչուած աղանդաւոր համայնքների լրիւ ցուցակը, որ տեղական իշխանութիւնները այդ հիման վրայ գիտենան, թէ ո՞ր աղանդին թոյլատրւում է պաշտամունք ունենալ։ Ցաճախ միևնոյն աղանդին հետևողները Ռուսաստանի զանազան տեղերում զանազան անուններ են ունենում, որից առաջ է գալիս շփոթութիւն։ Այժմ կան 65 աղանդաւոր համայնքներ, առանձին անուններով։

Ռուսաց թեմերում գոյութիւն ունեն «Епархіальныя Вѣдомости» թերթերը՝ ներկայումս Սինոդը հարց է բարձրացրել, այդ թերթերը կանոնաւորելու, քանի որ այժմ միայն լրագրերից արտատպութիւնները և պաշտօնական տեղեկութիւններն են տեղ գտնում դրանցում. կարևոր է համարւում թեմի ծխերի կեանքի զանազան կողմերը լուսաբանող լուրջ կենդանի յօդուածներ։

Սինոդը քննութեան է առել Բապտիզմի դէմ կռուելու խնդիրը։ Բապտիզմը ըստ ռուս միսիոնէրների տեղեկութեան, վերջերս մի քանի տեղերում, յատկապէս հարաւային Ռուսաստանում, Վոլգայի ընթացքով ընկած տեղերում և Սիբիրում բաւական տարածուել է։ Այս երևոյթը բացատրւում է նրանով, որ պատերազմի ժամանակ շատ գերմանացիներ քշուել են այդ կողմերը, որոնց մէջ կան Բապտիզմի մոլեռանդ հետևողներ։

Ի նկատի ունենալով ժամանակակից թանգութիւնը Սինոդը քննում է այն հարցը, որ քահանաները դիմեն ժողովրդին, յորդորեն համեստ ու չափաւոր լինելու իրենց պահանջների մէջ։

Ինչպէս յայտնի է ռուս եկեղեցու ներքին խնդիրների համար նախագծուած է ընդհանուր ժողով. այժմ գոյութիւն ունի մի յանձնաժողով, որի մի ճիւղը զբաղւում է ամուսնալուծական գործերի դատավարութեան եղանակը բարեփոխելու հարցով։ Յանձնաժողովն ընդունում է, որ ներկայումս գոյութիւն ունեցող եղանակը չափազանց հնացած է և եթէ այս դրութիւնը մնայ, պէտք է քաղաքացիական դատարանին յանձնուի։ Սակայն որովհետև Սինոդը որոշել է այդ խնդիրը կարգադրել ժամանակակից դատավարական կարգերի և պահանջների համեմատ, ուստի ամուսնալուծական գործն ամբողջապէս մնալու է հոգևոր ատեանի ձեռքում։ Ամուսնալուծական գործի երկու կողմերին էլ իրաւունք է տրուելու իրենց փաստաբանները ունենալու և ապացոյցները բերելու։ Վկաների հարցաքննութիւնը կատարուելու է ոչ թէ ոստիկանութեան ձեռքով, այլ թեմական հոգևոր ատեանի միջոցով. հոգևոր ատեանի որոշումը հաստատելու է թեմի առաջնորդը։

Եկեղեցական ժողովի նախնական աշխատանքները վերջացել են։ Եկեղեցու գլուխ է ճանաչուելու պատրիարքը, որին հաստատում է Բարձրագոյն իշխանութիւնը. պատրիարքն իրաւունք ունի հոգևոր գործերի համար զեկուցում տալու Բարձրագոյն իշխանութեան։ Աւագ-դատախազի իրաւասութիւնը կրճատուելու է։

Ֆինանսների նախարարը խնդիր էր յարուցել կազմելու յատուկ տիպի խնայողական գանձարկղներ ծխերում, պայմանով, որ հոգևորականները միջնորդ լինեն ժողովրդի և այդ գանձար-

կղների վարչութիւնների մէջ։ Սինօդը լսելով այդ առաջարկը տուեց իր համաձայնութիւնը, եթէ միայն թեմական իշխանութիւնը, ծխական համայնքի քահանան համաձայն են գանձարկղ բանալու իրենց ծխում։ Առ այժմ որոշուած է նման ձևի գանձարկղներ բանալ 2000 ծխերում։

ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ.

Հռոմի ներկայ պապ Բենեդիկտոս ԺԵ-րդը իրեն յայտնապէս Միջին Եւրոպայի պետութիւնների կողմնակից է ցոյց տալիս։ Իր նախորդ Պիոս Ժ-րդը միանգամայն հակառակ էր պատերազմին. երբ Աւստրօ-Ունգարիայի դեսպանը ներկայացել է իրեն և խնդրել, որ օրհնէ զօրքին, պապը պատասխանել է—ես չեմ կարող օրհնել այս պատերազմը, որն ամբողջ Եւրոպային դժբախտութիւն է բերում։

Պիոսի ընտրութեանը ջերմ կողմնակից է եղել Ֆրանց-Յովսէփ կայսրը, որն ըստ աւանդական սովորութեան, պապի ընտրութեան ժամանակ ճնշում է գործ դրել և իր թեկնածուն անցկացրել։

Պիոսը առաջ գիւղական համեստ քահանայ է եղել. այդ համեստութիւնը պահել է նա պապական աթոռը բարձրանալուց յետոյ։ Իւր կտակում գրել է.

—Ես ծնուել եմ աղքատ, ապրել եմ աղքատ, մեռնում եմ աղքատ։ Իմ յաջորդին խնդրում եմ, եթէ յարմար կգտնէ, թոշակ նշանակէ ամսական 300 ֆրանկ իմ երկու քոյրերին և ազգականուհուն, որոնք Նեղութեան մէջ են։

Բենեդիկտոս ԺԵ-ի ընտրութիւնը բաւական աղմկալի է եղել, սրա կողմնակիցները միջոցների մէջ խտրութիւն չեն դրել, տարածել են հակառակորդ թեկնածուների մասնաւոր կեանքը նկարագրող բրոշիւրներ։ Նոր պապը իր անունն ընտրելիս (կարդինալական անունը եղել է Դելլա Զեզա) յատկապէս ընտրել է Բենեդիկտոս անունը, որով ցոյց է տուել, թէ ինքը շարունակող է Բենեդիկտոս ԺԴ-րդի գործունէութեան։

Նոր պապը աղնուական աւանդութիւնների և դաղափարների ներկայացուցիչ է և վերջ է տուել արդէն Պիոս Ժ-րդի ժամանակ Վատիկանում իշխող նահապետական պարզ կեանքին։

Բենեդիկտոս ԺԵ-րդը հմուտ քաղաքագէտ է և աշխատում է բոլոր պետութիւնների ներկայացուցիչների հետ լաւ վարուել. թէև պարզ երևում է, որ իր համակրանքը Գերմանիայի և Աւստրիայի կողմն է։